

**ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016**

Սկզբնաղբյուր՝ <http://www.armworld.am/detail.php?paperid=5396&pageid=163940&lang=>

Երեկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ ՏԻԳՐԱՆ ՄՈՒԿՈՒԶՅԱՆԸ, ամփոփելով սեպտեմբերի 18-ին մի շարք մարզերում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքները, հայտնեց, որ դրանք, ըստ փաստական տվյալների, անցել են ազատ եւ արդար՝ Ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան, եւ այսօր արդեն ԿԸՀ-ն կհրապարակի վերջնական արդյունքները:

«Ընտրությունների ժամանակ մի շարք համայնքներում ընտրական գործընթացին հետեւում էին չորս տասնյակից ավելի քաղաքացիներ՝ վստահված անձի, դիտորդի եւ ՁԼՄ-ների ներկայացուցիչների կարգավիճակում: Այսինքն՝ լիարժեք ապահովվել է ընտրությունների ընթացքի հրապարակայնությունը: Դրանով, ինչպես նաեւ դիմումների քիչ քանակով, դրանց բովանդակությամբ եւ քվեարկության օրն առկա ահազանգերով պայմանավորված, միանշանակ կարելի է խոսել ազատ եւ արդար ընտրությունների մասին», - հավաստիացրեց ԿԸՀ նախագահը:

Ընդհանուր առմամբ ՏԻՄ ընտրություններ են տեղի ունեցել 5 մարզերի 317 համայնքներում: Միայն Արմավիրի մարզում գտնվող 2 համայնքում, որտեղ նախատեսված էին եւ ավագանու անդամի, եւ համայնքի ղեկավարի ընտրություններ, ավագանու ընտրությունները չեն կայացել՝ բավարար թեկնածուներ չառաջադրվելու պատճառով: Այդ համայնքներում ավագանու անդամների ընտրությունը կանցկացվի հոկտեմբերի 2-ին: Մնացած բոլոր համայնքներում ընտրությունները կարելի է կայացած համարել:

«Այդ համայնքներից 237-ում ընտրվում էին համայնքների ղեկավարներ, 295-ում՝ ավագանու անդամներ: Բայց համայնքների մեծ մասում միաժամանակ համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամների ընտրություններ են անցկացվել:

Ընդհանուր առմամբ քվեարկությանը մասնակցել է 408 թեկնածու: Առաջադրվել է 571 թեկնածու, որոնցից ինքնաբացարկ է հայտարարել 140-ը, մերժում է ստացել 4-ը՝ ընտրական գրավի գումարը չվճարելու համար, իսկ 19 թեկնածու հետ է վերցրել ինքնաառաջադրման դիմումը եւ չի մասնակցել ընտրություններին: Ավագանու անդամի համար առաջադրվել է 2841 թեկնածու, որից 17-ը հետ է վերցրել փաստաթղթերը, իսկ 132-ն ինքնաբացարկ է հայտարարել»:

Անդրադառնալով ՏԻՄ ընտրություններին կուսակցությունների ներկայացրած թեկնածուներին՝ ԿԸՀ նախագահն ասաց, որ միայն համայնքի ղեկավարների թեկնածության համար առաջադրվածներից 144-ն անկուսակցական է եղել եւ ինքնաառաջադրման սկզբունքով է մասնակցել ընտրություններին:

«Ազգային ինքնորոշում միավորում» կուսացությունից ընտրություններին մասնակցել է երկու անձ՝ 1-ը համայնքի ղեկավարի, մյուսը՝ ավագանու անդամի պաշտոնների համար, «Այլանս» կուսակցությունը միայն մեկ թեկնածու է առաջադրել համայնքի ղեկավարի համար, «Ազգային միաբանությունը» նույնպես ներկայացել է մեկ թեկնածուով՝ ավագանու անդամի

պաշտոնի հավակնությամբ: ԲՀԿ-ն համայնքի ղեկավարի համար ունեցել է 6 թեկնածու, եւս 57 թեկնածու՝ ավագանու անդամի համար: «Ժառանգություն» կուսակցությունից ավագանու անդամի ընտրություններին մասնակցել է 2 թեկնածու, ՀԱԿ-ից երկու անձ մասնակցել է ավագանու անդամի ընտրություններին, «Լուսավոր Հայաստան» կուսակցությունից ՏԻՄ ընտրություններին մասնակցել է 6 անձ, որից երկուսը՝ համայնքի ղեկավարի, 4-ը՝ ավագանու անդամի համար: ՀՅԴ-ից 15 թեկնածու մասնակցել է համայնքի ղեկավարի ընտրություններին, եւս 55-ը՝ ավագանու անդամի:

ՀՀԿ-ից ընդհանուր առմամբ ընտրություններին մասնակցել է 746 թեկնածու, որից 230-ը՝ համայնքի ղեկավարի, իսկ 516-ը՝ ավագանու անդամի պաշտոնների համար: «Հայկական վերածնունդ» կուսակցությունից 25 թեկնածու է առաջադրվել, նրանցից 6-ը պայքարել է համայնքի ղեկավարի պաշտոնի համար, 19-ը՝ ավագանու անդամ ընտրվելու համար եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն ընտրություններին մասնակցել է 4 թեկնածուով, որոնցից երեքը պայքարել է համայնքի ղեկավարի պաշտոնի համար, 1-ը՝ մասնակցել է ավագանու անդամի ընտրություններին:

Ընտրությունների արդյունքներով 58 համայնքներ նոր ղեկավարներ կունենան: Այդ համայնքներից ութը խոշորացման արդյունքում ձեւավորվածներն են՝ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքը, Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Տեղ համայնքները եւ Տավուշի մարզի Այրում, Կողբ, Նոյեմբերյան համայնքները: Ընդ որում՝ 20 համայնքում ղեկավարները փոխվել են այն պատճառով, որ գործող ղեկավարների թեկնածությունն այլեւս չի առաջադրվել, իսկ 30 համայնքներում գործող ղեկավարները պարզապես չեն ընտրվել:

Ընտրության նախնական արդյունքներով 6 համայնքում ինչպես համայնքի ղեկավարի, այնպես էլ ավագանու անդամի թեկնածուները միեւնույն քանակությամբ ձայներ են հավաքել: Օրենքը նման դեպքերի համար նախատեսում է վիճակահանությամբ որոշել հաղթող թեկնածուին: Եվ այսօր ընտրությունների արդյունքների ընդհանուր ամփոփման ժամանակ նաեւ վիճակահանություն կարվի:

Ինչպես տեղեկացրեց Տիգրան Մուկուչյանը՝ համայնքներում տեղի ունեցած ընտրություններից հետո ընդամենը 11 տեղամասերում վերահաշվարկ կատարելու մասին դիմումներ են ստացվել՝ 5-ը Մեծամորի ընտրատեղամասերի, իսկ մնացածը՝ Ազատամուտ եւ Այրում համայնքներում տեղակայված ընտրական տեղամասերի վերաբերյալ. «Վերահաշվարկներն իրականացվել են օրենքով նախատեսված ժամկետներում: Սակայն վերահաշվարկից հետո արձանագրված պատկերն այնպիսին էր, որ այս կամ այն չընտրված թեկնածուի համար մեկ կամ երկու ձայնի ավելացումը որեւէ էական նշանակություն չունեցավ, եւ արդյունքների որեւէ փոփոխություն չկատարվեց՝ այնքան որ չնչին էին շեղումները»: Ինչ վերաբերում է քվեարկության ընթացքի մասին դժգոհություններ եւ բողոքներ պարունակող դիմումների ընդհանուր թվին, ապա Տ.Մուկուչյանի հավաստիացմամբ՝ քվեարկության օրվա ավարտից հետո ընդհանուր առմամբ բոլոր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում միասին 144 դիմում է ստացվել, որից 142-ը ներկայացված է եղել դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների կամ նրանց դիտորդների անունից, իսկ 2 դիմում՝ քիչ ձայներ հավաքած թեկնածուի եւ նրա վստահված անձի կողմից:

«Դիմումներին կից ստացվել են նաեւ դրանց ծավալը մի քանի անգամ գերազանցող լիազորագրեր, սակայն պարզվել է, որ նրանք, ում անունից այդ լիազորագրերը տրվել են, իրականում որեւէ դիմում չեն ներկայացրել: Հետեւաբար տվյալ դիմումներն անվավեր են

ճանաչվել, իսկ մյուսները կքննվեն օրենքին համապատասխան կարգով՝ մինչև ընտրության արդյունքների ամփոփումը»,- նշեց ԿՀՀ նախագահը:

Լրագրողների այն հարցին, թե Էջմիածնում ընտրությունների անմիջապես նախաշեմին տեղի ունեցած դեպքերն արդյոք չպե՞տք է հիմք դառնային ընտրությունները հետաձգելու համար, քանի որ քաղաքապետի պարտված թեկնածու Արթուր Թումանյանը հիվանդանոցում էր հայտնվել եւ ըստ էության անհավասար մրցակցային պայմանների մեջ էր մյուս թեկնածուների նկատմամբ, Տ.Սուկուչյանը պատասխանեց, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ինչպես նաեւ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը նման իրավասություն չունեն, եւ ընտրությունները հետաձգելը, կասեցնելը տվյալ դեպքում իրենց գործառույթներում չէ:

«Ես դատապարտում եմ ոչ միայն նման, այլեւ ցանկացած բռնություն՝ անկախ նրանից, թե ինչ պատճառներով է դա իրականացվել: Այդ դեպքին կտրվի քրեաիրավական գնահատական:

Ինչ վերաբերում է ընտրությունները դադարեցնելուն, ապա ինչպես ԿՀՀ-ը, այնպես էլ ՀՀ-ն կարող են իրականացնել բացառապես այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են Հնտրական օրենսգրքով: Դրանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված որեւէ իրավադրույթ առկա չէ, որը հնարավորություն կտա ընտրական հանձնաժողովին չեղյալ ճանաչել, կասեցնել ընտրությունների ընթացքը, տեղափոխել այն: Այս պարագայում ընտրությունը չեղարկելու իրավական հիմք գոյություն չունի»:

Ինչ վերաբերում է Արթուր Թումանյանի կողմնակիցների՝ մամուլում արված հայտարարություններին, թե իրենք մի շարք տեղամասերում լցոնումների բազմաթիվ դեպքեր են արձանագրել եւ պատրաստվում են բողոքարկել ընտրությունների արդյունքները, ԿՀՀ նախագահը տարակուսանքով նշեց, որ եթե նման դեպքեր եւ դրանց հետ առնչվող ապացույցներ լինեին, ապա իրենք պետք է դիմումներ ստանային գոնե ընտրությունների արդյունքները վերահաշվարկելու կամ դրանք անվավեր ճանաչելու մասին: Մինչդեռ ընտրությունները բողոքարկելու ժամանակն արդեն ավարտվել է, իսկ իրենք նման բովանդակությամբ անգամ մեկ դիմում չեն ստացել: Իսկ դա նշանակում է, որ բոլոր հայտարարություններն անհիմն են եւ անտեղի աղմուկ բարձրացնելու նպատակ են հետապնդում:

Լրագրողների հետ հանդիպման ավարտին Տիգրան Սուկուչյանը, անդրադառնալով հոկտեմբերի 2-ին սպասվելիք ՏԻՄ ընտրություններին, նշեց, որ դրանք անցկացվելու են 6 մարզերում, ինչպես նաեւ Արմավիրի մարզի երկու համայնքներում, որտեղ ավագանու անդամների ընտրությունը չէր կայացել: Համայնքների ընդհանուր թիվը 375 է: Համայնքի ղեկավար կընտրվեն 292 համայնքներում, իսկ ավագանու անդամ՝ 339-ում: Ի դեպ, նշված համայնքների ցանկում ներառված չեն Գյումրին եւ Վանաձորը, որտեղ տեղի են ունենալու ավագանու ընտրություններ: Վանաձորում ընտրություններին կմասնակցի 8 կուսակցություն, իսկ Գյումրիում՝ 10 կուսակցություն եւ մեկ կուսակցությունների դաշինք: